

ըսելով թէ «Մեծ ոսոխ մ'ունիս, շուտ անձայն
իմ նաւս անցիր:» Անկէ Սամաթիա իր տունը
տարաւ, ուր ձի պատրաստելու զբաղեցաւ՝ հրա-
մանին համեմատ զՍարգիս առջի չաւուշին տա-
նելու: Ճամբան ճանչուորնները Սարգիսը տես-
նելով կը զարհուրին, եւ անմիջապէս ամէն
կողմ լուրը կը տարածուի, զոր Նուիրակ Սիմէոն
վալ լսելով՝ շատ ցաւեցաւ, չհամարձակեցաւ
անձամբ Սարգսին երթալ, իր քահանային ձե-
ռօք հարիւր լիւրա ղըկեց՝ գիտնալով որ դրամ
չունի: Նաեւ Մուրատեան Գասպար աննշան
մէկը ղըկեց Սարգսին՝ գաղտ ըսել տալու որ
չաւուշ գոհ ընէ եւ մինչեւ յաջորդ օրը չմեկնի:
Վասն զի բոլոր բարեկամները յուզուած՝ միասին
սկսան աշխատիլ ղինք աքսորքէ եւ կապանքէ
ազատելու: Ան ատեն Սարգիս ծածուկ չաւուշին
երակը փորձեց, եւ տեսաւ որ չաւուշ Պատրիար-
քին ոսկիններովը յագած է: Ուստի կարելի չե-
ղաւ ղինք կաշառել, մանաւանդ որ նոր հրաման
եկած էր իսկոյն ճամբայ ելլելու: Յակոբ անոր
համար կը փութացընէր, որ Սարգիս չըլլայ թէ
եպարքոսին առջեւ ելլէ եւ իրեն ոսոխ կանգնի:
Վերջապէս զՍարգիս ձի նստուցին, ոտքը շղթայ
կապեցին, եւ կապը ձիուն փորին տակէն ան-
ցուցին: Եւ այսպէս Սարգիս իբրեւ ոճրա-
գործ Ռոտոսթոյ բերուեցաւ եւ յանձնուեցաւ
միւս չաւուշին, յողբումն եւ ի լալիւն իւր
հօտին: